

XVII ԴԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԴԱՆՆԵՐ

ՀՅՆՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

XVII—XVIII դդ. հվրոպական երկրներում մեծ տարածում գտան մասնավոր պատվերներով ստեղծված մեղալները: Այդ սովորույթը թափանցեց նաև հայ իրականությանը. նախ՝ հայկական գաղթօջախներ, իսկ ավելի ուշ Հայաստան:

Կենցաղային, եկեղեցական և այլ առիթներով թողարկված մեղալները կանայք կրել են իբրև զարդ, իսկ առանձին դեպքերում դրանք կատարել են նաև պահպանակի դեր: Մեզ հետաքրքրող մեղալների վաղագույն օրինակները ստեղծվել են XVII դ. երկրորդ կեսին Վենետիկում կամ Ամստերդամում և առնչվում են Նոր Զուղայի վաճառականների անվան հետ: Վերջիններս մեզ են հասել շատ քիչ օրինակներով և պահվում են տարբեր թանգարաններում ու մասնավոր հավաքածուներում: Այդ է պատճառը, որ դրանք գրեթե չեն ուսումնասիրվել:

Քննվող մեղալները պատրաստվել են 1673 թ. Նոր Զուղայի հայտնի ընտանիքներից մեկի ներկայացուցիչ Գրիգոր Քերակի պատվերով¹ և հայտնի են երկու տարբերակով: Մեղալներից մեկի առաջին՝ երեսի վրա պատկերված է Քերակի դիմաքանդակը մինչև գոտկատեղը: Նա հագին ունի թափկարված խալաթ, գլխին՝ չալմա: Մեղալի վերևի եզրին գրություն է.

ԳՐԻԳՐ ԴԴԻ ՄԱՐԵՆՉ ԳԷՐԱԳԻ ԵՍ ԸՄ ՏՈՅ
ԿԱՎՏԵԱՅՏԵՆ ԾԱՌ -- ՏՐ

(Գրիգոր, որդի Միրմանենց Գերակի, ես եմ տեառ Հիսուսի հավիտյան ծառան տիրոջ):

Ծրկրորդ երեսին պատկերված է աստծո գառը՝ զորական դրոշով, որի աջ կողմում փորագրված է առյուծ և ճաճանչափայլ արև: Մեղալի ցածի մասում պատկերված է փեթակ, որտեղից ուղիղ շարանով թռչում են մեղունները, ձախ կողմում, եզրի մոտ, դրվագված է աղավնի: Շուրջը երիզող գրությունն է.

¹ Մեղալները պահվում էին Իտալիայի Բարչելո ազգային թանգարանում (Ֆլորենցիա): Մեղալների Իտալիայում գտնվելու պատմությունը մեզ հայտնի չէ: Մենք դիմեցինք թանգարանի տնօրինությանը մեղալներին վերաբերող որոշ տեղեկություններ ստանալու նպատակով: 1971 թ. դեկտեմբերի 9-ին գրած իր պատասխան նամակում Բարչելոյի թանգարանի տնօրենը հայտնում է, թե այդպիսիք իրենց մոտ չկան: Այսպիսով, ամենահին հայկական հիշատակային մեղալների հետագա ճակատագիրն անհայտ է:

ՏՐ ՅՍ ԳՎՌՆ ՎՕ ՈՐ ՇՆՈՐԻՆԾ ԿՎՅ ԵՐԿՐԻ ԹՈՃԻՐ

(Տեր Հիսուս Գառն Աստծո, որ շնորհեց մանանա երկրին թվին ՌՃԻՐ):
Մեղալն ունի կախիկ, տրամագիծը 70 մմ է (նկ. 1):



Ա երես

նկ. 1.

Բ երես


Երկրորդ մեղալի առաջին երեսի վրա պատկերված է Գրիգոր Քերակը. ողջ հասակով, երկար թափկարված խալաթով, թեթևակի դեպի ձախ շրջված: Նա աջ ձեռքում բռնել է համրիչը, ձախը հենել գոտկատեղին: Մեղալի եզրի գրությունը վերը նկարագրված օրինակի կրկնությունն է: Երկրորդ երեսի կոմպոզիցիոն պատկերը և գրությունը նույնպես նախորդի կրկնությունն է, տրամագիծը՝ 50,5 մմ (նկ. 2):

Գրիգոր Քերակի պատկերով մեղալներն առաջին անգամ հայտնաբերել է արվեստաբան Արմենակ Սազվյանը, 1921 թ. Ֆլորենցիայի Բարչելլո ազգային թանգարանի Մեդիչիների հավաքածուում: Դրանք նա հրատարակել է 1934 թ. առանձին հոդվածով և 1940 թ.² «էջեր հայ արվեստի» ժողովածուում: Սակայն հեղինակը չի տվել մեղալների հստակ նկարագրությունը: Մեզ նույնպես հայտնի չէ, թե դրանք ինչ մետաղից են դրվագված: Ա. Սազվյանը միակ մասնագետն է, որը անձամբ տեսել է այդ հավագյուտ մեղալները, սակայն լիովին ընթերցել դրանց մակագրությունները նրան չի հաջողվել:

Հիշատակված մեղալներն երկրորդ անգամ հրատարակել է Լ. Խաչիկյանը, 1966 թ.³ «Վաճառական Հովհաննես Զուղայեցու հաշիվների գիրքը» հոդ-

² A. Sakisian, A propos de deux medailles armeniennes de 1670 a l'effigie d'un marchand de Djulfa pres Isphahan, Revue Historique, CLXXIV, 1934; A r m e n a g Sakisian, Pages d'Art Arménien, Paris, 1940, էջ 115—120.

վածում³։ Նա ներկայացրել է մեդալների համառոտ նկարագրությունը և գրությունների ընթերցումը։ Լ. Խաչիկյանը նույնպես արձանագրությունները լրիվ չի ընթերցել, քանի որ օգտվել է միայն լուսանկարների պատճեններից։



Նկ. 2.

Ա երես

Բ երես

Մեդալների երկրորդ երեսների գրությունները համեմատաբար լավ են պահպանվել և դրանց ընթերցումը առանձին դժվարություն չի ներկայացնում։ Այդ գրությունները խիստ եղծված են, որոշ բառեր տրված են կրճատումներով, կան նաև վարպետի գրագիտության հետ կապված սխալներ։ Այդ է պատճառը, որ մինչ այժմ դրանց ամբողջական վերծանությունը չունենիք։ Մենք նույնպես վերծանել ենք լուսանկարի պատճենի օգնությամբ, սակայն փորձել ենք այն ներկայացնել հնարավորին չափ լրիվ։ Ըստ երևույթին, մեդալների գրությունների տեքստը ներկայացրել է պատվիրատուն կամ վարպետի առաջարկած գրությունը ուղղակի թարգմանվել է հայերեն։ Մեր վերծանությամբ այն կարդացվում է. «Գրիգոր, որդի Միրմանենց Քերակի, ես եմ Տեառ Հիսուսի հավիտյան ծառան տիրոջ»⁴։

Քերակները Վենետիկի հայկական գաղթօջախի անվանի տոհմերից են։ Հրապարակելով Վենետիկի հայտնի հայ ընտանիքների ցուցակը, Ղ. Ալիշանը հիշատակում է նաև Ջուղայի Միրմանենց Քերակի տոհմանունը։ Գրավոր աղբյուրներից հայտնի է, որ Վենետիկում XVII—XVIII դդ. ապրել է Քերակների ութ սերունդ⁵։ Մեդալների վրա պատկերված է Միրմանենց տոհմից Քերակի ավագ որդի Գրիգորը⁶։ Ինչպես նշվեց, Գրիգոր Քերակը պատկերված է

³ L. Khachikian, The ledger of the merchant Hovhannes Joughayetsi, From the Journal of the Asiatic Society, 4. 8, 1906, էջ 154—155։

⁴ Անկասկած, այս ընթերցումը նույնպես չի կարելի համարել վերջնական և պետք է ընդունել որոշ վերապահությամբ։

⁵ 2. Ղ. Ալիշան, Հայ-Վենետիկ կամ յարընչությունք Հայոց և Վենետաց ի ժԳ—Դ և ժԵ—Ձ դարս, Վենետիկ—Ս. Ղազար, 1896, էջ 501։

⁶ L. Khachikian, նշվ. աշխ., էջ 154։

արեւելյան վերնադաստով, գլխին չալմա: Հիշյալ հաղուսաւանքը տվյալ ժամանակի համար պաաահական չէր: Այն XII դ. նոր հուշար ընակիչների ամենատարածված ու ընդունելի հագուստն էր⁷:

Մեղաւների երկրորդ երեսների պատկերները, ինչպես վերը ասվեց, միաման են: Դրանց առանձին մանրամասները շատ տարածված են եղել տվյալ ժամանակաշրջանի մասնավոր արհեստանոցներում ստեղծված մեղաւների համար: Գառն ասածո, աղավնի, մեղու և այլն սմենուրեք պատկերվում էին XVII—XVIII դդ. եվրոպական երկրների մեղաւների վրա: Ուսումնասիրողները բավական հանգամանորեն զբաղվել են այս երեսի սիմվոլիկ պատկերների բացահայտման հարցերով: Մասնավորապես փեթակի ու մեղունների պատկերումը Ա. Սաղաւանը համարում է աշխատանքի ու շաշնածաւալ գործունեության այլարանական արտահայտություն⁸: Լ. Խաչիկյանը փեթակը դիտում է որպես Քերականների ընտանիքի դանձատուն, իսկ մեղունները խորհրդանշում են նրանց բազմաթիւ, աշխարհով մեկ սփռված աշխատավորներին⁹:

Հեաազոաողների երկու ենթադրություններն էլ արամարանական են և հետու մեկը մյուսին բացասելուց: Մի բան անսխտելի է՝ նկարիչը ցանկացել է ընդգծել Քերականների ընտանիքի աշխատասիրությունը, նրանց սերնդից-սերունդ փոխանցվող դործիմաց ու անդադրուն դործունեությունը:

Մեղաւագործ վարպետը որոշ շափով անսովոր է ներկայացրել պարսկական պետության ղինանշանը: Օգտագործելով ղինանշանի դրեթե բոլոր մանրամասները, նա առյուծին պատկերել է ոչ թե յաթաղանով, երեք ոտքերի վրա կանգնած, այլ երկու թաթերի վրա՝ դեպի ձախ քայլելիս, որի աջ կողմում ճաճանշափայլ արեն է: Ըստ երեւութին, նկարիչը ղինանշանը պատկերել է պատվիրատուի նկարագրության հիման վրա և եվրոպական երկրների հերալդիկ նշանների ազդեցությամբ այն ներկայացրել է «սաեղծագործաբար», իր իսկ մտահղացմամբ:

Գրիգոր Քերակի պատկերով մեղաւները մինչ այժմ հայտնի հայերեն արձանագրությամբ ամենապաղ հիշատակային մեղաւներն են: Ցավոք, այդ հազվագյուտ հուշարձանների ստեղծման հսակ տեղայնությունը այսօրվա նյութերով որոշել հնարավոր չէ: Ըստ երեւութին, հիշյալ մեղաւները պատրաստել են վենետիկի կամ Ամստերդամի տեղացի ոսկերիչ-վարպետները, որոնց անունները, իրրե կանոն, չեն պահպանվել:

АРМЯНСКИЕ МЕДАЛИ XVII ВЕКА

ГЕНРИХ САРКИСЯН

Резюме

В 1673 г. представитель армянской семьи Кераков из Новой Джуги Григор в частной мастерской ювелира заказал две медали, на которых изображен его портрет. Обе медали были обнаружены в 1921 г. искусств-

⁷ С. В. Тер-Аветисян, Город Джуга, Тбилиси, 1937, стр. 37—38.

⁸ Armenag Sakisian, Pages d'Art Arménien, Paris, 1940, էջ 118.

⁹ L. Khachikian, նշվ. աշխ., էջ 155.

воведом А. Сагзяном в музее Барджелло (Флоренция). Медали были опубликованы А. Сагзяном в 1934 г. и 1940 г., затем Л. Хачикяном в 1966 г. Тем не менее многие вопросы, касающиеся, в частности, чтения надписей, материала, из которого они сделаны, места изготовления и т. д., полностью не освещены.

На лицевой стороне первой медали представлено поясное изображение Григора. Сверху по окружности надпись на армянском языке: «Григор, сын Керака из рода Мирманенц, я господа Исуса вечный слуга». На оборотной стороне—Агнец божий с хоругвью. Рядом лев и лучезарное солнце. Внизу улей, к которому слетают пчелы. Слева у края — голубь. Круговая надпись: Господь Христос, Агнец Божий, что дарит манну небесную в году 1673. Медаль с ушком, диаметр 70 мм.

На лицевой стороне второй медали изображение Григора Керака в рост. Обратная сторона та же, что и на предыдущей медали. Диаметр 50,5 мм.

В 1971 г. мы обратились в Музей Барджелло для уточнения некоторых вопросов, связанных с рассматриваемыми медалями. В ответном письме нам сообщили, что таких медалей в музее нет.

На сегодняшний день это самые ранние армянские медали, которые, по всей вероятности, были изготовлены в Венеции или Амстердаме местным мастером.